ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Գնացեք, աշակերտ դարձրեք բոլոր ազգերին»:
(ՄԱՏԹ. ԻԸ 19)
«Եւ մեզ վիճակվեց Բարդուղիմեոս առաքյալը»:
(Մ. ԽՈՐԵՆԱՑԻ)

Քրիստոսի 12 առաքյալներից Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը եկան Հայաստան՝ կատարելու իրենց Վարդապետի երկնառաք պատգամը՝ *«աշակերտելու զհեթանոսս»*: Բերեցին Լույսը Կենաց, Ճշմարտությունն Ավետարանի, նահատակվեցին՝ իրենց հավատքով դնելով Եկեղեցու հիմնաքարը:

Այս տարվա տոնացույցով մեր Եկեղեցու առաջին երախտավորների՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների հիշատակին է նվիրված նոյեմբերի 30-ը:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինությամբ, 1995 թ.-ից սկսյալ, ավանդույթ դարձավ Հայոց առաջին լուսավորիչ առաքելոց հիշատակի օրը նշանաչել որպես Քրիստոնեական Դաստիարակության և Կրթության Օր: Այդ օրը Հայաստանի տարբեր շրջանների կրոնի ուսուցիչներ էին եկել հոգևոր սնունդ ստանալու և այն փոխանցելու իրենց սիրելի սաներին:

Այդ օրը հավատացյալների խուռներամ բազմությունը ապրում էր Սուրբ Պատարագի հոգեհույզ աղոթքներով և երգերով: Օրվա պատարագիչը Ուկրաինայի Հայոց թեմի Առաջնորդ հոգեշնորհ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանն էր: Օրվա քարոզի նյութը Հայ Եկեղեցու հիմնադիրների մասին էր, ովքեր *«ցանեցին առաջին սերմերը և ոռոգեցին իրենց արյամբ»*:

Պատարագն ավարտվել էր, սակայն հաղորդվողների հոծ շարքը չէր սպառվում. հավատավոր ժողովուրդը եկել էր նաշակելու սրբությունը՝ հաղորդվելով Տիրոջ Մարմնի և Արյան խորհրդին:

Հավարտ Ս. Պատարագի, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի նախագահությամբ, տեղի ունեցավ համաժողովահանդիսություն՝ նվիրված Քրիստոնեական Դաստիարակության և Կրթության Օրվան:

Հանդիսությանը ներկա էին Սրբազան հայրեր, վարդապետներ, աբեղաներ, սարկավագներ, կրոնի ուսուցիչներ՝ Էջմիածնից, Երևանից, Արմավիրից, Մասիսից, Արտաշատից, ինչպես և հեռավոր շրջաններից՝ Ապարան, Գորիս, Գյումրի, Աբթիկ:

Տերունական աղոթքից հետո հավաքվածներին բացման խոսքով դիմելով Ս. Էջմիածնի ՔԴԿ-ի փոխտնօրեն հոգեշնորհ Տ. Զարեհ արդ. Կաքաղյանն ասաց. «Հոգևոր դաստիարակությունը պիտի սկսել ամենավաղ տարիքից: Անժխտելի է այն իրողությունը, որ ժողովրդի ինքնության՝ ազգապահպանության և ազգային դիմագծի ձևավորման առաջին օրրանը դպրոցն է:

Պատահական չէ, որ դարեր շարունակ հայոց դպրոցները գործել են ազգապահպան ամենաեռանդուն ուժի հովանավորության ներքո: Այդ ուժը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին է, որի սպասավորները եղել են նաև հայոց առաջին ուսուցիչները:

Մենք ևս, սիրելի ուսուցիչներ, այդ սրբազան գործին ենք կոչված: Ուսուցիչը ոչ

միայն տառաճանաչության դասեր պետք է տա ու գիտելիքներ ուսուցանի, այլ նաև ձևավորի իր սաճի հոգևոր աշխարհն այնպես, որ նա վաղը դառնա իր ժողովրդի, իր ազգի, իր Եկեղեցու հավատավոր զավակը՝ համամարդկային սիրո ու գթասրտության կրողը: Այդ ոգով դաստիարակեցին իրենց աշակերտներին հայոց մեծագույն ուսուցիչները՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին, Ներսես Շնորհալին և ուրիշներ: Հայ դպրոցի այսօրվա ուսուցիչը պիտի շարունակի նրանց բարի ավանդները ու դառնա հայ դպրոցի հենասյունը:

Այսօր վերագտնում ենք պատմական անցյալը: Դպրոցն ու Եկեղեցին վերականգնում են այն աղերսները, որով կապված են եղել դարեր շարունակ: Այդ գործի նվիրյալները նաև մենք պետք է լինենք և միշտ գիտակցենք, որ հայոց դպրոցի և Հայոց Եկեղեցու նպատակը մեկն է՝ կրթել և դաստիարակել մեր նախահայրերի ավանդներին հավատարիմ սերունդ՝ աստվածավախ, գրագետ, հայրենասեր և եկեղեցասեր նոր սերունդ»:

«Մայր Եկեղեցու առաքելությունը արդի հայ ընտանիքի և մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության գործում» թեմային էր նվիրված հոգեշնորհ Տ. Տաքև աբեղա Հակոբյանի ուսանելի դասախոսությունը, որում Հայր Սուրբն ի մասնավորի ասաց. «Քրիստոնեությունը գործնականորեն մեզ կսորվեցնե, թե երիտասարդի կյանքը անընդհատ անումի և կազմակերպումի շրջանի մեջ է, ուր երիտասարդը ինքն իրեն հարց կուտա. ո՞վ եմ ես, ուրկե՞ կուգամ, ի՞նչ կընեմ և ո՞ւր պիտի երթամ: Ահա կրոնական հարցումներու տարափ մը է, որ կմտահոգե նաև հայ երիտասարդին, որով կդիմե գիտության դպրոցին, սակայն գիտության պաշարը և անոր լիությունը չի կրնար կազմել անոր նկարագիրը, չի կրնար տալ բարոյական օրինաց սերտումը ու թափանցումը անոր հոգիին ներս: Երիտասարդ նոր սերունդը կդիմե տարբեր ճանապարհներուն, բայց միակ ճանապարհը Եկեղեցին է: Որովհետև Եկեղեցին ո՛չ քարեղեն հաստատություն է, ո՛չ դավանանք է, ո՛չ նվիրապետություն է, սակայն այս բոլոր արտահայտությունները ունենալով հանդերձ, ան ամեն բանե ու ամեն ինչե վեր կյանք է, ճանապարհ է դեպի նշմարտություն, ճանապարհ է դեպի երանություն, ան ոգի է և առաքելություն է նոր սերունդի կրոնաբարոյական դաստիարակության համար: Ահա թե ինչու Հայոց Եկեղեցին իր պատմության առաջին իսկ օրեն կրոնաբարոյական դաստիարակությունը լայն իմաստով դարձուց իր հիմնական նպատակակետը բոլոր ժամանակներուն: Այսօր հայ կյանքեն ներս երիտասարդներ կգանգատին, թե աշխարհը փոխված է, թե Աստված անոնց չի բավարարեր, Աստված չարերը չի պատժեր ու արդարները չի պաշտպաներ ու վարձատրեր: Ի՞նչ կարն մտածողություն ու խելակորույս հավատ: Այո՛, աշխարհը փոխված է, բայց Աստված ու Եկեղեցվո առաքելությունը չէ փոխված, այլ մարդն է փոխված, որովհետև նա չունի կրոնա-հոգևոր իդեալ, կյանքի նպատակ, աստվածամերձ առաքելության տեսիլք ու երկնային կոչումի գիտակցություն: Այս բոլոր հոգևոր պտուղները մեր երիտասարդներու հոգիին ներս մուտք կգործե Եկեղեցիի ճամբով:

Այսօր, երբ մենք կոգեկոչենք առաքյալներու հիշատակը, այն մեզ անգամ մը ևս կառաջնորդի էական որոշ նշմարտություններու, որոնք սերտ կապ ունին մեր մատաղ սերունդի կրոնաբարոյական դաստիարակության հետ:

Ա/ Կրոնաբարոյական դաստիարակությունը երիտասարդ մատաղ սերունդին ու հայ ընտանիքին զորեղ գիտակցություն կուտա, թե քրիստոնեական կրոնը ունի իր մեջ հոգևոր բարիքներ՝ հույս, սեր, խաղաղություն, արդարություն, նշմարտություն՝ հանդեպ մարդոց և աշխարհին:

Բ/ Կրոնաբարոյական դաստիարակությունը կկերտե տիպար ու օրինակելի անձեր մարդկային ու հասարակական ընկերության համար: Քրիստոնեությունը երիտասարդին կսովրեցնե ինչպես նանչնալ իր պարտավորությունները հանդեպ իր նմանները: Ցուրաքանչյուր երիտասարդ, որ ունի Աստուծո պատկերը ու նմանությունը, նյութական և բարոյական պարտավորություններ ունի իր ընտանիքին, իր բարեկամին, իր եկեղեցվույն և իր հայրենիքին:

Գ/ Կրոնաբարոյական պարզ ու առողջ դաստիարակությունը երիտասարդին մեջ պիտի հիմնե ազգապահպանման զորեղ դիմագիծը ու նաև կրոնական սրբության գիտակցյալ շտեմարանը, որուն մեջ կգտնվի հայաշեն ընտանիքը, վասնզի քրիստոնեական կյանքի առաքինություններով տոգորված հայ ընտանիքը գլխավոր ազդակներեն մին է ազգային միության ու ազգային հարատևության առհավետ: Հայ ազգի գոյության, զորության ու ստեղծագործ կյանքի հիմնախարիսխը ու հավերժության ազդակը քրիստոնյա հայ ընտանիքն է, որ յուր երդիքի տակ կծլի ու կծլարձակի անկեղծ հայրենասիրության տեսիլքը:

Դ/ Կրոնական դաստիարակությունը արդի հայ ընտանիքին ու մատաղ սերունդին կուտա այն ճշմարտությունը, թե Հայաստանյայց Եկեղեցվո առաքելությունը հավատքի տարածումն է կենդանի խոսքով և ստեղծագործ կյանքով, որովհետև հավատքը կյանք է ու կյանքը գործ և առանց ստեղծագործ աշխատանքի հավատքը մեռած է, ինչպես կըսե Հակոբոս առաքյալը. «*Եղբայրնե՛ր, ի՞նչ օգուտ այն մարդուն, որ կըսե, թե հավատք ունի, երբ որ հավատքին արտահայտությունը գործեր չունի, որովհետև հավատքը առանձին՝ առանց գործելու մեռած է*»: /Հակ. Բ 14-17/:

Ե/ Հայ Եկեղեցվո առաքելությունը հայ ընտանիքին ու երիտասարդ սերունդի դաստիարակության համար կնշանակե հայուն ամրորեն ու անճակտելիորեն կապել հոգևոր իր հայրենիքին: Այո՛, Հայ Եկեղեցին մեր ժողովրդի համար եղավ փրկության և խաղաղության նավահանգիստ, եղավ Նոյան տապան, ան դարձավ ոգեղեն սանդուղք, Վահան Թեքեյանի խոսքերով դեպի երկինք բարձրացնող գաղտնի ճամբա, որ 2000 տարիներ շարունակ իր զավակները առաջնորդեց դեպի Աստվածնանչում:

Զ/ Հայ Եկեղեցվո առաքելությունը ունի նաև ազգային նկարագիր, որովհետև հայ ժողովրդի համար Հայ Եկեղեցին հաց ու ջուր է իր կյանքի հարատևության համար, որովհետև Հայ Եկեղեցին իր ազգային պատկանելության ոգիով, լեզվով, երաժշտությամբ և ճարտարապետությամբ կկազմե ամբողջությունը հայ ազգին: Չի կրնար ըլլալ Հայ Եկեղեցի առանց հայ ժողովրդի և կարելի չէ հայ ժողովուրդ առանց Հայ Եկեղեցիի»:

Բանախոսությունից հետո ուսուցիչները մեծ ոգևորությամբ երգեցին «*Էջմիածինն ի Հօրէ*» շարականը, որից հետո «*Քրիստոնեական բարոյականությունը և արդի հասարակական պատասխանատվությունը*» թեմայով բանախոսության հրավիրվեց ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը՝ առանձնակի շեշտելով. «Քրիստոնեությունը մարմնավորման կրոն է և բխում է այն սկզբունքից, որ Աստված մարդ դարձավ, ապրեց մարդկանց մեջ՝ դառնալով այս աշխարհի քաղաքացի և մարդկային հասարակության անդամ: 2000 թ-ի մոտալուտ Մեծ տարեդարձը բոլոր քրիստոնյաներին պարտավորեցնում է նոր, ավելի խորը վերաիմաստավորման. «*Քանի որ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տուեց, որպէսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը*» (Յովհ. Գ 16):

Քրիստոնյաները ավետարանական առաքելությամբ գիտակցում են իրենց պատասխանատվությունը աշխարհի և հատկապես հասարակական կյանքի հանդեպ, որպես աղբյուր և օրինակ ունենալով Քրիստոսին: Հիսուսի առաքելության մեջ քրիստոնյաները գտնում են իրենց առաքելության հաստատումը:

Առաքելության իմաստը նախ և առաջ այն է, որ Քրիստոսին խոստովանողները չկորցնեն իրենց նույնությունը Մարդացյալ Աստծու հետ, մնան Աստծու որդիներ՝ Հիսուսի օրինակով:

Աշխարհում քրիստոնյաները բախվում են նույն դժվարություններին, ինչին անհավատները: Սակայն քրիստոնյաները փորձում են դրանք լուծել Եկեղեցու ուսմունքի և Քրիստոսի նկատմամբ հավատի լույսի ներքո՝ օգնություն խնդրելով Աստծուց: Ուստի, Եկեղեցին, որ դավանում է մարդու բարձրագույն կոչումը, ելնելով քրիստոնեական բարոյականության սկզբունքներից, անվերապահորեն գործուն մասնակցություն է բերում հասարակական կյանքի կարգավորման գործում: Ղեկավարվելով Քրիստոսի կողմից՝ առաջարկում է մարդկային ցեղին անկեղծ համագործակցություն համընդհանուր եղբայրություն ստեղծելու նպատակով: Այս դեպքում մարդկային կյանքում կարևորվում են հետևյալ կետերը.

1. Հասարակական կյանքի դժվարությունների նկատմամբ քրիստոնյաների պատասխանատվության անհրաժեշտությունը:

2. Աշխարհի նկատմամբ քրիստոնյաների դիրքը:

3. Քրիստոնեական լույսի ներքո աշխարհի համար լիարժեք պատասխանատվություն:

Այս կետն ունի նաև իր ենթակետերը.

ա/ Հոգատարություն անձի լիարժեք զարգացման համար

բ/ Աշխարհում մարդու ակտիվության հասարակական տեսանկյունը.

գ/ Աշխարհի քրիստոնեացումն ու ավետարանացումը:

4. Քրիստոնեական հույսի ոգով:

Վերջապես, քրիստոնյաները, համերաշխ ներգրավվելով աշխարհի ստեղծման գործընթացում և տարածելով մարդկանց միջև համընդհանուր եղբայրության գաղափարը, ի նկատի ունեն ոչ միայն մարդկային բնության բաղամասային բնույթը, այլ շեշտում են նաև, որ զուտ եղբայրական հարաբերությունները մարդկանց միջև նախատեսում են երանելի կյանք, այսինքն միություն Քրիստոսի հետ: Աշխարհի քրիստոնեական ըմբռնումը, որպես Արարչի պարգև, դառնում է կոչում բոլոր քրիստոնյաների համար: Ուստի Քրիստոսի բոլոր հետևորդները պետք է կարողանան հաղթահարել աշխարհի նկատմամբ երկու բացասական հակումներ. մի կողմից՝ պետք է հաղթահարեն մարդու կյանքի՝ Աստծուց գուրկ լինելու գայթակղությունը, մյուս կողմից՝ վտանգավոր է այդպիսի «*փախուստը*» աշխարհից և իր խնդիրներից:

Ուրեմն՝ աշխարհիկ գործերի մեջ ներառման ճշգրիտ չափը արդար խիղճն է, որը կյանքի բոլոր դեպքերում ունի մեկ չափանիշ՝ Քրիստոսի սիրո պատվիրանը (Մարկոս ԺԲ 31)»:

Վազգեն վարդապետի խոսքին հաջորդում է «*Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի*» շարականի հոգեհույզ երգեցողությունը:

Ապա ներկաներին իր ողջույնի խոսքն ու հայրապետական պատգամն է հղում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, կրոնի ուսուցիչներին հիշեցնելով քրիստոնեության էությունը, մեկ անգամ ևս նշում է հոգևոր կրթության մեթոդների ճշմարիտ կիրարկումը: